ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 49 - Ա

„27" փետրվարի 2024թ.

ք.Արտաշատ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության՝ կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ, 12-րդ և 17-րդ կետերով՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Մասիսի ԲԿ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի փետրվարի 28-ին ժամը 11:00–ին կայանալիք մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցույթը կազմակերպել մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում, մրցույթի արդյունքները ներկայացնել մարզպետին:

Восстановимая подпись

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2024 թ. փետրվարի 27-ի
N 49-Ա որոշման

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Սեդրակ Թևոնյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Սուսաննա Կտրակյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Լիանա Բարսեղյան - Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության հիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ

Ռուզան Մարտիրոսյան - Առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ

Հայկ Խուրշուդյան - Առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ

Լեռնիկ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Հրաչ Դավթյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Восстановимая подпись

X

ՄԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Подписано: STEPANYAN MARINE 7709710131 Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ